ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

# ՈՐՈՇՈՒՄ N 25

05 ապրիլի 2021 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի առաջարկությունը.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 26-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 10 որոշման թիվ 1 հավելվածի 3-րդ գլխի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<Հաստատություն ընդունվում են մինչև 6 տարեկաներ երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ - 10 | Դեմ՝ - 0 | Ձեռնպահ՝ - 0 |
|---|---|---|---|
| ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ԱՐՍԵՆՅԱՆ ԱՐՍԵՆ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ՌՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ | ------------------------- | ------------------------- | ----------- |
| ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ | ------------------------- | ------------------------- | ----------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի ապրիլի 05

Քաղաք Մարալիկ